

Է. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ «ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆԸ»

Դարերի պատմություն ունեցող հայ բառարանագրությունը հարուստ է նաև հայերեն բացատրական բառարաններով, որի լավագույն նվաճումն են նոր Հայկազյան բառարանը և Ստ. Մալխասյանցի քառահատոր «Հայերեն բացատրական բառարանը»:

Ինչպես հայտնի է, նոր Հայկազյան բառարանն իր ստվարածավալ երկու հատորների մեջ ամփոփում է գրաբարի համարյա ամբողջ բառագանձը: Բառարանում բառի բացատրության, հոմանիշների հետ տրվում է ոչ միայն նրա ծագումը, այլև վկայություններ հայ հին գրականությունից:

Սակայն լեզվի զարգացումը, նորանոր բառերի երևան գալը, նոր ձևադրերի հայտնաբերումը, գրականության առաջընթացը, բազմաթիվ բառերի ստուգաբանության ճշտումը պակասավոր են դարձնում գրաբարի այս հոյակապ բառարանը: Եվ Մ. Ավգերյանը, որ 1846 թ. հրատարակել էր Հայկազյան Առձեռն բառարանը, ստիպված 1865 թ. վերահրատարակում է՝ լրացումներով: Հայկազյան բառարաններն ուղի հարթեցին հետագա հայ բառարանագիրների համար թե՛ բառացանկի և թե՛ սիստեմի տեսակետից:

Հայերեն բացատրական բառարանները նախաստվետական շրջանում հրատարակվել են առավելապես Վենետիկում և Կ. Պոլսում: Վենետիկի միաբանների կատարած աշխատանքը բանասիրական բնույթ է կրում, իսկ Կ. Պոլսում լույս տեսած բառարանները նախատեսվում են գործնական նպատակների համար, այդպես է Փեշտմալճյանի բառարանը, այդպես են և Դաբամաճյանի բառարանները:

Հայերեն բացատրական բառարաններից առաջիմ ամենավերջինը և ամենածավալունը Ստ. Մալխասյանցի քառահատոր բառա-

րսան է, որի հրատարակութունից արդեն անցել է ավելի քան տասը տարի:

Ստեփանոս Մալխասյանցը հավասարապես գիտեր գրաբարը, միջին հայերենը և ժամանակակից հայերենը: Նա այնպես հիմնավոր և խորը գիտեր հայերենն իր տարբեր շրջաններով, իր ամբողջ հարստությամբ ու ճոխությամբ, որ կարողացավ ոչ միայն ձեռնարկել, այլև իր հաջող ավարտին հասցնել մի այնպիսի դժվարին գործ, ինչպիսին է նրա բառարանը:

Մալխասյանցը այնպիսի հմուտ բառագետ էր, որ լեզվի բառապաշարի, ոճի առանձնահատկություններով կարող էր որոշել և ճշտել երկի հեղինակը, նրա ժամանակաշրջանը: Տարիների ընթացքում ժրջան աշխատանքով կուտակած տեսական այդ պաշարն իր փորձական արտահայտությունն է գտնում նրա բառարանագրական աշխատանքում:

Մալխասյանցն իր բառարանագրական տեսական հայացքներն արտահայտել է իր առաջին գրախոսականներում: Նա գրախոսել է հայերեն մի շարք միակեզվյան և երկկեզվյան թարգմանական բառարաններ: Իր այդ կարգի անդրանիկ հոգվածներում բառարանագրից նա պահանջում է հմտություն, ստույգություն, մեծ ուշադրություն դարձնելով ոճաբանության, ժողովրդական խոսքի, կենդանի ոճերի, առածների և դարձվածքների վրա: Սակայն Մալխասյանցը չի սահմանափակվել միայն ուրիշների կազմած բառարանները գնահատելով:

Ստեփանոս Մալխասյանցը բառարան կազմելու աշխատանքին առաջին անգամ մասնակցել է 1919 թ., երբ դատավարությունները հայերեն վարելու համար կարիք էր զգացվում համապատասխան բառարանի: Ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարանը առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսում. սա շուրջ 1400 բառ պարունակող մի փոքրիկ առձեռն բառարան էր: Մի խումբ մասնագետներ վազմել են բառարանի տարբեր մասերը, որը հետո խմբագրել են բոլորը միասին, խմբագրական աշխատանքների մեջ ներգրավելով երկու խոշոր հայագետների՝ Մանուկ Աբեղյանին և Ստեփանոս Մալխասյանցին:

Սովետական իշխանության առաջին տարիներին հատկապես ուշադրություն է դարձվում հայերենը մասնագիտական տերմինաբանությամբ հարստացնելու վրա, ռուսի և առաջին հերթին կազմվում, լույս են ընծայվում երկկեզվյան մասնագիտական բառարաններ: Այդ բառարանների անդրանիկներից են «Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների» և նույն բառարանը շրջափակում:

ռուսներն բառարան երկաթուղային տերմինների՝ հրատարակված 1925 թվականին: Այս բառարանները կազմող հանձնաժողովի մեջ էր նաև Ստեփանոս Մալխասյանցը:

Այս շրջանը կարծես նախապատրաստական փուլ լինի Մալխասյանց-բառարանագրի համար:

Ստեփանոս Մալխասյանցը բառարան կազմելու բուն աշխատանքին ձեռնարկում է 1922 թվականին. սկսում է կազմել հայերեն բացատրական բառարանը, որը նրա գործունեության գլուխգործոցն է, ինչպես ինքը արտահայտվել է Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարանի» մասին, սա էլ իր՝ Մալխասյանցի «բոլոր դիտական գործերի թագն ու պսակն» է:

Հայ իրականության մեջ կազմվել և հրատարակվել են բառարանների հայտնի համարյա բոլոր տեսակները՝ և՛ միալեզվյան և՛ բազմալեզվյան, որոնցից շատերը (հայկազյան բառարանը, Հր. Աճառյանի հայերեն արմատական, հայոց անձնանունների բազմահատոր, Ջախջախյանի, Նորայր Բյուզանդացու թարգմանական բառարանները) բառարանագրական աշխատանքի չգերազանցված օրինակներ են: Այժմ պարզ է, թե ինչպիսի հմտություն էր պահանջվում Ստ. Մալխասյանցից՝ իր նոր խոսքն ասելու մի այդպիսի հարուստ փորձ ունեցող բառարանագրության մեջ: Առաջին հայացքից թվում է, որ այսպիսի հարստության առկայությամբ Մալխասյանցին քիչ բան էր մնում արելու, բայց պետք է ասել, որ Մալխասյանցը այս դեպքում էլ կարողացավ իր հարուստ ներդրումն անել:

Ի՞նչն է ստիպել նրան կյանքի հասուն շրջանում ձեռնարկել այսպիսի հսկայածավալ աշխատանքի: Նա գրում է. «Թեպետ բավական թվով բառարաններ կան տպված հայերեն լեզվով կամ հայերեն և մի օտար լեզվով՝ բայց ոչ մեկը նրանցից հայերեն լեզվի բառարան չէ, այս բառի ընդարձակ նշանակությամբ¹: Իսկապես, մեր ունեցած բառարանների մեծագույն մասը թարգմանական բառարաններ են, իսկ բացատրական բառարաններն էլ լավագույն դեպքում ընդգրկում են հայերենի որոշ մի շրջան. հիշենք Հայկազյան նոր, Փեշտմալճյանի բառարանները, որոնք գրաբարի բառապաշարն են ընդգրկում, և այդ բառերի (գրաբար) նշանակությունն են տալիս, իսկ ներկա կենդանի հայերենի տասնյակ հազարավոր բառերը, ինչպես և հին բառերի այժմյան կենդանի նշանակությունները չեն տալիս: Աշխարհարարից գրաբար եղած բառարաններն էլ,

¹ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հատ. 1, Առաջաբան, էջ է:

բնականաբար, չունեն գրաբարի և ժամանակակից հայերենի բառերը, դեռ չենք խոսում նրանց փոքր ծավալի մասին, ինչպես և բարբառային բառարանները: Այդ պակասները լրացնելու էր կոչված Մալխասյանցի հայերեն բացատրական բառարանը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, երբ հնարավոր է դառնում թողնել սունկավարժական աշխատանքը, Մալխասյանցը խոստովումատի հանձնարարությամբ սկսում է հայերեն բացատրական բառարան կազմելու իր աշխատանքները: Բառարանի բառացանկը կազմելիս հեղինակի առաջ ծառանում է մի դժվարին խնդիր, այն է՝ ինչպես և որտեղից քաղել այդ բառերը: Կար երկու ճանապարհ. կամ ինքը՝ հեղինակը վերընթերցելով ամբողջ հայ մատենագրությունը պետք է վերցնեք հայերեն բառերը իրենց վկայություններով, կամ պետք է բավարարվեք եղած բառարանների ընդգրկած բառամթերքով: Առաջինը անհնարին էր մի մարդու համար, ուստի Մալխասյանցը սկսում է իր բառարանի աշխատանքները երկրորդ ճանապարհով: Սկզբում նա հայ բառարաններից ընտրում է հիմնական աղբյուրներ, որոնք մեծ տառամբ հայերեն բացատրական կամ հայերենից մի օտար լեզու թարգմանական բառարաններ են: Դրանցից վերցնելով բառացանկը, կազմում է իր բառարանի կմախքը, որը լրացնում է զանազան երկլեզվյան թարգմանական և մասնագիտական բառարանների նոր բաձերով, իր բառարանի բառացանկում ընդգրկված բառերի թիվը հասցնելով 120.000-ի:

Նախքան բառարանի քննության անցնելը, անհրաժեշտ է ծանոթանալ նրա աղբյուրներին: Թերևս ոչ մի բառարանի համար այնքան մեծ նշանակություն չեն ստանում աղբյուրները, որոնցից օգտվել է հեղինակը, որքան Մալխասյանցի համար իր օգտագործած աղբյուրներն ու օժանդակ միջոցները: Ընդհանրապես հայ բառարանագրության, մասնավորապես բացատրական բառարանների բառացանկի հիմնական և սկզբնական աղբյուրը հանդիսացել են Հայկազյան Հին և Նոր բառարանները: Այստեղից պարզ է դառնում, թե աշխատանքի ինչպիսի մեծ և դժվարին բաժին է ընկնում այդ առաջին բառարանների կազմողներին:

Հիմնական աղբյուր հանդիսացող տասը բառարաններից՝ Նոր Հայկազյան, Առձեռն, Փեշտմալճյանի և Զախչախյանի բառարանները տալիս են գրաբարի բառամթերքը, իսկ բարբառային բառերի համար աղբյուր են հանդիսացել Ամատոմու և Աճառյանի հիշված բառարանները: Միջին հայերեն և նոր գրական լեզվի բառերը քաղված են ավելի ուշ շրջանի երկլեզվյան բառարաններից: Բառարանի

աղբյուրները բաժանված են գրաբարյան բառերի, բարբառային բառերի և նոր գրական բառերի աղբյուրների: Հեղինակն իր գլխավոր աղբյուրների ցանկում ամենից առաջ հիշում է Նոր Հայկազյան բառարանը: Ինչպես հայտնի է, այդ բառարանի բառամթերքն ամբողջությամբ Ավգերյանն ընդգրկել է իր Առձեռն բառարանում և ավելացրել հինգ հազար բառ, ուստի բառամթերքի տեսակետից Նոր Հայկազյան բառարանը մեծ դեր խաղացած չի լինի, և անշուշտ Մալխասյանցն իր քարտարանը սկսել է Առձեռն բառարանով: Նոր Հայկազյան բառարանը մեծ օժանդակություն և նյութ կարող էր ընձեռել հեղինակին բառերի նշանակությունները պարզելու, բացատրելու գործում: Բառարանի բառացանկի հիմնաքարը Ավգերյանի «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի»-ն է, որի բառացանկն ընդգրկել է շնչին բացառությամբ:

Մալխասյանցը չի վերցրել Առձեռն բառարանից.

1. Բայերի դերբայական ձևերը (անցյալ դերբայը, օրինակ՝ կարոտեալ, համափառավառեալ, մարդասպանեալ և այլն: Ենթակական դերբայը՝ մաքառող, յիշեցուցանող, պոռոտող: Հարակատար դերբայը՝ մրափած, ցանկացած և այլն):

2. Գրաբարի պատճառական բայերը:

3. Կրավորական բայերը:

Իր քառարանն անտեղի չժանրաբեռնելու նպատակով Մալխասյանցն ազատվում է Առձեռն բառարանի միևնույն բառի տարբեր գրություններից: Այդ նպատակով չեն բերված.

4. Առ նախածանցով բայերը, որոնց այդ ածանցը նոր իմաստ չի տալիս, օրինակ՝ առմեհձենեամ-մեհձենեամ, առնշանակեմ-նշանակեմ և այլն:

5. Հարբել բայի արմատով բոլոր բառերը չեն բերված Ա տառի տակ, ինչպես Առձեռն բառարանում:

6. Նույնը և յ տառի տակ առաջ և դրանով կազմված բառերը կրկնվում են յ նախդիրով՝ յառաջ—օրինակ՝ առաջադեմ, յառաջադեմ և այլն:

7. Ե-ով և Յե-ով սկսվող որոշ բառեր կրկնվում են Առձեռն բառարանում, իսկ Մալխասյանցը տվել է ձիշտ գրությունը, օրինակ՝ Իրկարարան, երկարակյաց, երկարաձգական, երկարաձգեմ և այլն:

8. Ան ժխտական նախածանց յանցող ածականները Մալխասյանցի մոտ բերված են ընտրությամբ. օրինակ՝ իրավացիորեն չեն բերված անտխարար, անտրամագին, անտխրական, անտրամագույն, անփախչելի և նման բառեր:

9. Ածականների գերադրական աստիճանը, երբ պարզ ու հասկանալի է, բայց անկենդան, անգործածական, Մալխասյանցը չի վերցնում. օրինակ՝ անուանվորագույն, անուշաճոտագույն և այլն:

10. Ածականադերմ-ական ածանցով կազմված մի շարք բառեր, որոնց այլ ձևերն ավելի գործածական են և հարազատ՝ չկան, օրինակ՝ անպատրաստական, ըմպելական և այլն: Առձեռն բառարանի՝ «ական վերջածանցով ստարքված» անգործածական բոլոր բառերը դուրս են մնացել բառարանից:

11. 5, 6, 7 կետերում ասվածը վերաբերում է նաև 3 և է տառերին. օրինակ՝ եղէգնաձև և եղեգնաձև: Առձեռն բառարանում շատ էն այսպիսի բառերը:

12. Նույն նպատակով անպարամանորեն բերվում են անոճաները, զոյակաճաները եղակի թվով, իսկ Առձեռն բառարանում հաճախ հանդիպում են մի քանի հոգնակի ձևերը, որոնք բացատրված են նույնությամբ ինչպես եղակին կամ առաքում են համապատասխան բառը, օրինակ՝ երկրպագու և երկրպագուն, ամառաստուն-ամառատուն և այլն:

13. Տարբեր կամ սխալ դրությամբ հանդիպող բառերը Մալխասյանցի բառարանում ճշտված են, այսինքն՝ բերված է միայն ճիշտ գրությունը՝ անփոխութիւն-անփոփոխութիւն, երեշտ-երաշտ, երեկոյն-երեկոյ և այլն:

14. Տեղի խնայողության համար սակավ գործածելի, այժմ բոլորովին անգործածական բառերի ածանցավոր ձևերը Մալխասյանցը տալիս է մի գլխաբառի տակ. օրինակ՝ ետեղագրել, -ակալ, -ապան և այլն:

15. Թվականներով ածանցված և բարդված ձևերը չեն բերվում այն չափով, ինչպես է Առձեռնում. օրինակ՝ երեք թվականի 12 ձևերից մի քանիսը տրված են երեքալուսյան բառի տակ և առաքում են եռ արմատի համապատասխան ածանցված ձևերը:

16. Մալխասյանցը չի վերցրել Առձեռն բառարանի կրոնական ճեղ իմաստ ունեցող բառերը, ինչպես՝ աստուածախոթ. բիրիլիական որոշ անուններ, օրինակ՝ Ամովսածին-Ծսայի մարգարեն, Աբելունի-Աբելի քույրը, Յովնանեան:

17. Աշխարհագրական անուններ և որևէ երկրացի նշանակության բառերը, օրինակ՝ Ատիկէաստան, Խուժաստան, Մարաստան, Շեքկաստան, Պարսկաստան և այլն: Արգիական, խուժաստանեայք և այլն:

18. Անհաջող կազմված բարդություններ օրինակ՝ օսկիագոծ. ռսկիաթել, օսկիածին և այլն:

Այս սկզբունքներով օգտվելով Առձեռն և Նոր Հայկազյան ռա-
ռարաններից, Մալխասյանցն իր բառարանի մեջ ամփոփել է գրա-
ւարի բառային կազմի մեծ մասը, որը լրացրել է Փեշտմալճյանի,
Ջախջախյանի և ապա Աճառյանի բառարաններում եղած նոր բա-
ռերով:

Ենորհիվ գրաբարի լիակատար և միմյանց լրացնող բառարան-
ների և բարբառային բավական հարուստ բառարանների, Ստ. Մալ-
խասյանցի բառարանի բառացանկի համապատասխան մասն էլ
կազմում է նրա ավելի լիակատար և լավ մշակված մասը: Մյուս
կարևոր մասը՝ միջին հայերենի և ժամանակակից հայերենի բառա-
յին կազմը, շատ պակասավոր է: Դա բխում է Մալխասյանցի մեթո-
դից, որովհետև նա ինքը բառեր չի հավաքել, այլ վերցրել է այն՝
ինչ արդեն կա բառարաններում: Իսկ մինչ այդ եղած բառարանները
ընդգրկում են հիմնականում նախասովետական շրջանի բառամը-
թերքը:

Աշխարհաբարի միակ բառարանը Գաբամաճյանի կազմածն է,
որի բառացանկի հիմնական մասը կազմում են Առձեռն բառարանի
բառերը, միայն շատ շնչին տոկոսը այլ բառարաններից դուրս բե-
րած նորաբանություններ են:

Ժամանակակից հայերենի բառերով անհամեմատ հարուստ է
Դադբաշյանի «Հայ-ուսերեն լիակատար բառարանը»: Այս բառա-
րանները Ստ. Մալխասյանցի բառարանի բառացանկի հիմնական
աղբյուրներն են, փակ բառերը ստուգաբանելիս հեղինակը օգտվել և
որպես ուղեցույց է ունեցել Հր. Աճառյանի «Հայերեն արմատական
բառարանը»:

Ստ. Մալխասյանցի բառարանի երկրորդական աղբյուրները
երկրեզվյան կամ ամսնագիտական բառարաններ են:

Եթե Մալխասյանցը այս բառարաններից օգտվեր այնպես ինչ-
պես նախորդներից, նրա բառարանը ավելի արդիական և ակտիվ
գործածական կլիներ ժամանակակից ընթերցողի համար:

Սակայն այս աղբյուրները լրիվ չեն օգտագործված: Հեղինակի
բերած ցանկը չի սպառում հայերեն բոլոր բառարանները: Սովետա-
կան շրջանում տեխնիկայի, գիտության ձեռք բերած հաջողություն-
ներն արտացոլվել են այդ տարիներին լույս տեսած բազմաթիվ տեր-
մինաբանական, մասնագիտական բառարանների մեջ, որոնցից
Մալխասյանցը հիշում է միայն բժշկական, ռազմական, շինարարա-
կան և երկաթուղային տերմինների բառարանները, մոռացության են
տրված իրավաբանական, առևտրա-հաշվապահական, աշխատան-

բային, ներվարական, բուսաբանական տերմինների բառարան-
ները՝ Մինչդեռ սրանք քացի նեղ մասնագիտական տերմիններից
ունեն առօրյա գործածական բառեր, որոնք չեն մտել Մալխասյան-
ցի բառարանի մեջ, իսկ իր հիշատակած տերմինաբանական բառա-
րաններից նա օգտվել է Քրնտրովի, խուսափելով ղուտ մասնագի-
տական տերմիններից։

Համեմատությունից պարզվեց, որ անտեսված են բազմաթիվ
բառեր, ինչպես՝ ազդատու, ազոտական, ավեձե, ավիաչափ, ախ-
տհանում, ածխաթթվային, ակոսավոր, ակոսափաշ, այրվածք, ան-
աշխատունակ, անտառաբուծություն, աշխատածամ և այլն, Բացի
նեղ մասնագիտական տերմիններից Ա տառով սկսվող 135 այսպիսի
բառեր են բաց թողված աղբյուրների շարքում հիշված երկաթուղա-
յին տերմինների հայ-ռուսերեն բառարանից։

Տերմինաբանական բառարաններից Մալխասյանցն օգտվել է
հատկապես Մ. Արեղյանի ռազմական բառարանից, Սակաճն վեր-
ջինի հետ համեմատելիս պարզվեց, որ շատ տերմիններ ու բառեր
աչքաթող է արել կամ գիտակցորեն չի վերցրել, ինչպես՝ առաջադա-
հական, առաջադուտ, ավտոմատաձիգ, ելաբան, ինֆնաշարժող,
կանխանաշիվ և այլն։

Սովետական շրջանի տերմինաբանական բառարանները, ինչ-
պես նշում է և Մալխասյանցը, հարուստ են բազմաթիվ նորակազմ
տերմիններով, բայց հենց այդ մասում թերանում է նրա բառա-
րանը։

Բացի այդ բառարաններից Մալխասյանցի բառարանից առաջ
յուրյա է տեսել 1933 թ. երկհատոր «Ռուս-հայերեն նոր բառարանը»,
որից նա հրաժարվել է օգտվել։ Մինչդեռ բառարանի հեղինակների
կազմած նոր բառերի թիվը շուրջ հինգ հազար է, որոնք դուրս են
մնացել Մալխասյանցի բառարանից, օրինակ՝ ավանս, ավտոբուս,
սուխիվ, աթեիզմ, ատլետ, բադրջան, բանդիտական, բատրակու-
թյուն, բենզինաչափ, դիաբեթում, ներծծում և այլն։

Բառարանի սկզբունքները.— Լեզվի մաքրությունը պահպանե-
լու և վերստուգելու տեսակետից մեծ աշխատանք ունեն բացատրա-
կան բառարանները, առանձնապես ժամանակակից լեզվի բացա-
տրական բառարանը, որի անհրաժեշտության մասին նշել է Վ. Ի.
Լենինը, դեռ 1920 թ.։ Ծանոթանալով Վ. Դալի բառարանին Վ. Ի.
Լենինը լուսավորության ժողովում Լոճաշարսկուն գրում է. «Հիանալի
բան է, բայց չէ՞ որ դա մարգարեական բառարան է և հնացել է։ Ժա-
մանակը չէ՞՝ արդյոք ստեղծել իսկական ռուսաց լեզվի բառարան,

ասենք, արնպիսի բառերի բառարան, որոնք գործ են ածվում այժմ և կլասիկներին կողմից, Պուշկինից մինչև Գորկին»¹։

Մեծ նշանակություն տալով բառարան կազմելու գործին Վ. Ի. Լենինն առաջարկում է 30 գիտնականների ընդգրկել այդ աշխատանքի մեջ՝ ստեղծելով նրանց համար հատուկ պայմաններ։ Անձամբ հետևելով դրան Վ. Ի. Լենինը անգամ աշխատանքի ծրագիր է առաջադրում հանձնաժողովին. նա խորհուրդ է տալիս կազմել ֆրանսերեն հայտնի բառարանի՝ «Լյառուսսի» օրինակով, «Առաջադրանքը՝ ռուսերեն լեզվի (Պուշկինից մինչև Գորկի) համառոտ (փոքր «Լյառուսս»-ի նմուշով) բառարան։ Օրինակելի, ժամանակակից։ Նոր ուղղագրությամբ»²։

Նման բառարանի կարիք զգացվել և զգացվում է այժմ մեզանոմ։ Այդ բացը լրացնելը նպատակադրել է իրեն Մալխասյանցը։

Այս գործն սկսելիս հեղինակը գիտակցել է, որ նոր գրական լեզվի բառամթերքը, որքան որ բառարաններում բերված է, շատ թերի է, իսկ գրականությունից և մամուլից հավաքելը՝ անհնարին, ուստի որոշել է՝ «... բառամթերքի (մասնավորապես նոր գրական լեզվի բառամթերքի) կողմից բավականաձև արդեն հավաքված նյութերով և ձեռնարկել բառարանի հորինման, եղած նյութը ընդհանուր սիստեմի վերածել և որքան ձեռնհաս էի՝ ճիշտ ու մանրամասն նշել բառերի նշանակությունները, կազմել ոճերը, օրինակները և այլն»³։

Համաձայն հեղինակի ծրագրի բառարանը պետք է պարունակի «հայերեն լեզվով գրված ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրությամբ սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ռամկորենի, արդի գրական լեզվի և գավառական բարբառների՝ իրենց ոճաբանություններով, հին և նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ արևելյան լեզուներից, ցույց տալով նրանց ծագումը, գրական լեզվի ու բարբառների բառերի ամեն մի նշանակության համար համապատասխան օրինակներ, քերականական ցուցումներ և այլն»⁴։

Մալխասյանցը իր բառարանը կսրկոր է համարում երկու տեսակետից՝ գործնական և բանասիրական։ «Գործնականում նա ամեն մի գործածողի միջոց է տալիս գտնելու իրեն հետաքրքրող բառը և ծանոթանալու նրա նշանակության հետ մանրամասնորեն։ Այս կողմից ներկա բառարանը պետք է փոխարինե բոլոր լույս տեսած հա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, 1952, հատ. 35, էջ 471։

² Նույն տեղում, էջ 532։

³ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 8։

⁴ Նույն տեղում, էջ 6։

յերեն բառարանները՝ միասին վերցրած և ավելի լայն շահով ու մանրամասնորեն¹։ Բայց Մալխասյանցը ավելի կարևոր է համարում իր բառարանի մյուս՝ բանասիրական նշանակությունը։ Քառնի ու լեզուն մտքի արտահայտիչն է բառերի միջոցով՝ ուստի հաջերեն լեզվի բառազանձի միատեղ հավաքումը բովանդակում է այն բոլոր մտքերը, գաղափարները, դործողությունները, առարկաները, ոլորն-ցով ապրել է հայ մարդը կամ որոնք մատչելի են եղել նրան ավելի քան 1500-ամյա ժամանակաշրջանում, ուրեմն տալիս են ընդհանուր գաղափար նրա կուլտուրական, տնտեսական, բարոյական և այլ զարգացման²։

Ուրեմն բառարանը մի կողմից տալիս է 1500 տարիների գրավոր և բանավեր հայերենը՝ բառարաններում ամփոփված շահով, իսկ Վճյուռ կողմից, երբ այս բառարանում բառերը բերվում են իրենց ամբողջ հասակով, իրենց բոլոր՝ հին թե նոր նշանակություններով՝ սա հետազոտողին միջոց կտա ուսումնասիրելու յուրաքանչյուր բառի աստիճանական զարգացման պրոցեսը, հայտնաբերելու ժողովրդի մտածողության այն ուղին, որով նա բառի մի հիմնական նշանակությունից հետզհետե ծագեցրել է նոր նշանակություններ³։

Սա հենց հաստատում է, որ այս բառարանի գերազանցությունը մյուսներից միայն թվային, քանակական չէ, նա բարձր է բոլոր բացատրական բառարաններից իր մշակվածությամբ։

Ստ. Մալխասյանցը հավաքելով թված բառարանների ամբողջ բառամթերքը այն վերածել է ընդհանուր սխտեմի և իր ուժերի ներածին շափ ճեղշտ ու մանրամասն նշել բառերի նշանակությունները, կազմել օրինակներ նրանց իմաստները լուսաբանելու համար, բերել է եղած բազմաթիվ ոճեր, ընտրել համապատասխան օրինակներ, վկայություններ գեղարվեստական և քաղաքական գրականությունից։ Կատարելով այս հսկայական աշխատանքը, տալով հայերենի 1500 տարվա պատկերը, հեղինակն փր գործը իրավամբ համարում և մի նոր լիակատար բառարանի սկիզբը։

Այսպիսով Մալխասյանցի բառարանը ոչ միայն հավաքագրում է հայերենի բառային կազմը (բառարանների սահմաններում), այլև ենթարկում է նոր, գիտական ուսումնասիրության։

Պետք է անշուշտ լրացվի, շարունակվի այդ բառարանը, որը հեղինակի խոստովանությամբ արդի հայերենի ամբողջ բառային կազմը չի պարունակում։ Մեր ունեցած բառարանների այդ պակա-

¹ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1-ին, էջ է։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում։

սը Մալխասյանցն աշխատել է մասամբ լրացնել: Այդ նպատակով նոր շրջանի հեղինակների (Պոռշյան, Ծուղուրյան, Պատկանյան, Բումանյան և ուրիշներ) ստեղծագործություններից, իր մայրենի բարձրադաս, ժողովրդական ներգրծից, սովետական շրջանի հայ մամուլից և գրականությունից հավաքել ու իր բառարանի մեջ է մուծել մոտ երեք հազար բառ: Բացի այդ բառարանի խմբագիրների կողմից առաջարկված են ուսանողների միջնորդությամբ հայոց լեզվի մեջ մտած երկու հազար օտար բառեր, որոնք ցույց են տրված հատուկ նշաններով: «Ս» տառով արանձնացված են դեղագործ Սեպետճյանի հավաքած 387 բուսաբանական բառեր, Բառարանի ամբողջ բառացանկը կարելի է բաժանել հետևյալ մասերի.

1. Գրաբարի բառային կազմը համարյա լրիվ է: Այդ թվում՝

ա) բառեր, որոնք գրաբար գրականության մեջ գործածված են շատ սակավ և «Առձեռն բառարանում» բերվում են աստղանիշով, այսինքն անստույգ և անհայտ բառեր, օրինակ՝ ախանկեալ, ախանակեալ, ախլոթեմ, ախլոթեմ, աղմառայց, ամանակալիւն և այլն: Սրանք շատ չնչին տոկոս են կազմում «Առձեռն բառարանում» և Մալխասյանցի բառարանում նշված են հատուկ նշաններով:

բ) Գրաբարի բառային կազմի զգալի մասը, որ դարձել է մեր ժամանակակից հայերենի բառային կազմի շերտերից մեկը:

գ) Գրաբարի հիմնական բառաֆոնդից բառեր, որոնք մտնում են ժամանակակից հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ:

դ) Գրաբարի հիմնական բառաֆոնդի բառեր, որոնք մտնում են ժամանակակից հայերենի ակտիվ բառային կազմի մեջ:

ե) Գրաբարի հիմնական բառաֆոնդի բառեր, որոնք չեն մղանում ժամանակակից հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ:

զ) Գրաբարի հիմնական բառաֆոնդի այն բառերը, որոնք անգործածական են ժամանակակից հայերենում, չեն մտնում ակտիվ բառային կազմի մեջ:

է) Գրաբար բառեր, որոնք անգործածական են ժամանակակից հայերենում:

2. Բառարանում միջին հայերենի բառային կազմը գրաբարյան բառերի համեմատությամբ, թերի է.

ա) Բառեր, որոնք մտնում են ժամանակակից հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ:

¹ և, գ է կետերի բառերը, որոնք հնարանություն են ժամանակակից հայերենում, տրվում են *, © պայմանական նշաններով, որպես հազվադեպ կամ հնացած բառեր:

բ) Բառեր, որոնք մտել են ժամանակակից հայերենի բառային կազմի մեջ:

գ) Բառեր, որոնք չեն մտել ժամանակակից հայերենի բառային կազմի մեջ և գրականության մեջ հանդիպում են հազվադեպ, Մալխասյանցը նշում է համապատասխան պայմանական նշանով:

3. Ժամանակակից հայերենի բառային կազմը համեմատած պարարյան շրջանի հետ՝ բառարանում շատ պակասավոր է. այդ բացատրվում է նրանով, որ հեղինակի վերջին աղբյուրը Դադբաշյանի և 30-ական թվականներին լույս տեսած ռուսերեն ու մասնագիտական բառարաններն են: Դադբաշյանի բառարանից հետո մեր լեզուն ավելի հարստացել, ճոխացել է տեխնիկայի և կոլտուրայի դարգացման զուգընթաց: Գրաբարից, բարբառներից վերցվել են բառեր, որոնց տրվել է նաև նոր իմաստ, եղած արմատներով կազմվել են հազարավոր նորանոր բառեր, չեղած դեպքում փոխ են առվել ռուսերենից կամ ռուսերենի անիջնորդությամբ այլ լեզուներից:

4. Բարբառային բառերն ու ոճերը հարուստ են շնորհիվ Ամատունու և Աճառյանի բառարանների: Դրանցից վերցված է հարուստ նյութ՝ ոճային ձևերը բացատրելու և ցուցադրելու համար:

Աճառյանն իր բառարանի մեջ մուծել է բարբառային այն բառերը, որոնք չեն գործածվում գրական լեզվի մեջ և կամ եթե գործածվում են, ապա ոճն են մի նոր իմաստ: Այդ տեսակետից այս բառարանների բառացանկը կազմում են մեծ մասամբ այնպիսի բառեր, որոնք կարող էին մտնել Մալխասյանցի բառարանի մեջ միայն համապատասխան նշաններով:

Գրաբարյան և միջին հայերենի բառերը բերված են բառարանների սահմաններում, իսկ ժամանակակից հայերենի համար բացի հիմնական աղբյուրներից՝ հայերեն, ռուս-հայերեն բառարաններից, կային բազմաթիվ այլ աղբյուրներ՝ մասնագիտական, բառարաններ, որոնցից Մալխասյանցն ընտրել է բառեր:

Բառացանկի բառերի ընտրության սկզբունքները.— 1. Բառարանի մեջ տրված է հնարավորության սահմաններում, գրական և խոսակցական հայերենի բառային կազմը՝ սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը (1940 թ.՝ բառարանը տպագրության հանձնելը):

2. Գրական լեզվի մեջ գործածվող օտար բառերից տառադարձված բառեր ու ոճեր:

3. Տեղային գործածության սահմաններից դուրս եկած բարբառային բառեր, որոնք ազգային լեզվի բառային կազմի սեփականությունն են դարձել:

4. Տեղային գործածութիւնն ունեցող բարբառային բառերը չեն բերված բառարանում:

5. Խոսակցական լեզվի ընտանեկարի բառեր և ոճեր:

6. Գիտական և տեխնիկական տերմիններից ընտրված են միայն լայն տարածում գտած տերմինները:

7. Նեղ մասնագիտական տերմինները չեն բերվում:

8. Աշխարհագրական անունները (լեռներ, գետեր, քաղաքներ և այլն բառարանի մեջ չեն տրվում):

9. Ժողովուրդների, ազգութիւնների անվանումները բերված են ընտրութեամբ: Հիշվում են ավելի հանրածանոթ ազգերը և ժողովուրդները:

10. Նախդիրները, նախածանցները տրված են որպէս գլխաբառ:

Բառանդավածի կազմութեանը.— Բառարանի բառամթերքը հավաքելուց հետո սկսվում է բառարանագրի հիմնական և ավելի դժվարին աշխատանքը: Այդ առաջին հտապը Մալխասյանցը անվանում է բառահավաքի աշխատանք, որին հետևում է բառարանագրի ինքնուրույն աշխատանքը: Վերջինս բառաքնական, գիտական աշխատանք է, որը պահանջում է տվյալ լեզվի խորը իմացութեան, հմտութեան, լեզվագիտական պատրաստութեան և ընդհանրապես դիտական մեծ պաշար:

Մալխասյանցը բազմաթիւ բառարաններից ընտրութեամբ վերցրնելով բառարանի հոսմ նյութը՝ բառացանկը գիտական մշակութեան է: Ենթարկել և կազմել բառահոգւածներ: Հեղինակի նպատակն է տալ հայերեն ամեն մի բառի բոլոր իմաստները, նշանակութեանները, քերականական ձևերը (հոլովում, խոնարհում), իմաստափոխութեան պատմութեանը, հաճախ և ստուգաբանութեանը:

Մալխասյանցը հնարավորին չափ լրիւ տալով բառի իմաստաբանական բնութագիրը՝ նույն չափով տալիս է և բառի քերականական պատկերը: Նա չի բավարարւում անունների միայն սեռական հոլովաձևը տալով: Տալիս է գրաբարում և այժմյան գրական լեզվում տարբեր հոլովաձևեր ունեցող բառերի թե՛ հին և թե՛ նոր հոլովական ձևերը: Օրինակների մեջ բերում է բառի տարբեր ձևեր, հավաքելով քաղականաչափ ոճեր ու դարձվածքներ, վերջիններիս միջոցով ցուցադրելով բառի ոչ միայն իմաստային, ոճական տարբեր ձևերը, այլև քերականական ձևերն ու առումները:

Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» բառահոգւածը կազմված է հետևյալ կերպ:

Գլխաբառից հետո տրվում են քերականական ձևերը (հոլով-

ման, խոնարհման) և ինչ խոսքի մաս լինելը: Եթե բառը փոխառութիւն է, տրվում է նրա ծագումը, թե որ չեզվից է վերցված, ապա բերվում է ըստը համապատասխան գրությամբ: Եթե այն անցել է հայերենին ռուսերենի միջնորդութամբ, այդ նույնպես նշվում է: Եւ պա տրվում է բառի նշանակութեան բացատրութիւնը, որին հետեւում են օրինակները:

Գրաբարում և ժամանակակից հայերենում տարբեր գրութիւն ունեցող գոյականն անոնները բերվում են երկու ձևով որպես գլխաբառ եզակի թվով այբբենական կարգով, օրինակ՝ դուռ և դուռն, վերջինս որպես հնացած ձև ունի համապատասխան Ծ նշան, նման դեպքում բացատրութիւնները և օրինակները բերված են ժամանակակից ձևի տակ, իսկ հնացածի տակ տրվում են գրաբարի հոլովական ձևերը:

Գրաբարում ն-ով վերջավորվող բառերը, որոնց ն ընկել է ժամանակակից հայերենում, բերվում են երկու ձևով (մութ-մութն, մուկ-մուկն, սերմ-սերմն, աաս-տասն և այլն):

Այն բառերը, որոնք ունեն գրաբարյան հոգնակիակերտ f մասնիկը, բայց այդ չի գիտակցվում ժամանակակից հայերենում, օրինակ՝ աչք, ոտք, ձեռք և այլն, բերված են որպես անոններ եզակի թվով, և նշվում է այդ բառերի հոլովը՝ աչքի, աչքեր, աչքերի և այլն: Իսկ համապատասխան տեղում տրվում է և գրաբարի եզակի թվով ակն, որի հոգնակի ձևն է աչք:

Ընդհանուր առմամբ Մալխասյանցը չի խուսափում ձևերի բազմապիսութիւնից, աշխատում է բոլոր ձևերն էլ բերել, միայն այն դեպքերում, երբ բառիմաստը հասկանալի է, տեղի խնայողութեան համար նույն գոյական անվան -ութիւն վերջածանցով ձևը տալիս է մի բառահոլովածում, օրինակ՝ բենագետ-գիտութիւն, բենագիր-գրութիւն և այլն:

Բայանունները բերվում են որպես առանձին գլխաբառ. օրինակ՝ բերումն, գրավումն և այլն:

Ածական անունները տրվում են Կերբան գոյական հիմքից հետո՝ նույն տողի վրա գծիկով բերվում է ածականակերտ ածանցը, օրինակ՝ բանանցիւ-ական: Նշվում են սեռականի եզակի և հոգնակի ձևերը: Ածական անունների գերադրական աստիճանը բերվում է ամեն-, ամենա- նախածանցով:

Թվական անուններից տրվում են և քանակականները և դասականները՝ որոշ սխառմով: Վերցված են միավորները, տասնավորները և հազար, միլիոն, միլիարդ թվականները: Բաղադրյալ թվական անունները չեն բերվում:

Գրության տարրեր ձևեր ունեցող թվականները բերվում են առանձին, օրինակ՝ տասը և տասն ու նրանց ածանցված ձևերը՝ տասնումեկ և տասնութիմու, տասնութեք, տասնեքեք և այլն:

Դերանուններից բերված են թուրոր:

Առանձին բառահոգված են կազմում միջածանցավոր բայերը, օրինակ՝ գանել և գտանել, ինչպես և բայի տարրեր կերպերը, օր.՝ գոսանալ, գոսացնել, գոսացուցանել. բեռնանալ, բեռնացնել. բըզ-զալ, բզզացնել. դեղնացնել, դեղնացուցանել, դեղնեցնել և այլն, և այլն:

Դերբայական ձևերից վերնագրային բառ են անորոշ դերբայը և ենթակայական դերբայը, երբ գործածվում է որպես գոյական, այսինքն՝ բացի գործողությունը կատարողի նշանակությունից ստացել է մի ուրիշ ինքնուրույն իմաստ, օրինակ՝ գրող, թեև այն գրել բայի ենթակայական դերբայն է, սակայն բացի այդ իմաստից ունի և դրող-սանդձագործող իմաստը. վերջին իմաստը տրված չէ որպես գլխաբառ՝ ո՛չ «Առձեռն բառարանում», ո՛չ Փեշտմալճյանի և նույն-իսկ Գաբամաճյանի բառարաններում: Մալխասյանցը վերցրել է Դադբայանի «Հայ-ռուսերեն բառարանից»:

Մյուս խոսքի մասերը (մակբայ, շաղկապ, կապեր, միջարկու-թյուններ) տրված են որպես գլխաբառ:

Նախածանցներից՝ ամեն-, ամենա-, ան-, աբտա-, չ-, վեր-, տ- և այլն բացատրվում են առանձին:

Բառաճեղձվածի ֆեռականական մասը.— Բառահոգվածի քերականական կողմի վրա պատշաճ ուշադրություն է դարձված Մալխասյանցի բառարանում: Տրվում են բառերի քերականական ձևերը, անպայմանորեն նշվում է բառի ինչ խոսքի մաս լինելը:

Հոլովվող անունների սեռական եզակի հոլովածները միշտ չէ, որ տրվում է այն պարզ պատճառով, որ ժամանակակից հայերենում անունների զգալի մասը ենթարկվում է ի հոլովման, իսկ մյուս մասի համար անպայման բերվում է եզակի և հոգնակի սեռականը: Սակայն Մալխասյանցը չի սահմանափակվում դրանով, Այն բառերը, որոնք գրաբարում և ժամանակակից հայերենում ենթարկվում են տարբեր հոլովումների, բառարանում բերվում են հին և նոր ձևերով, օրինակ՝ դեղձենի (նույ, նեաց), նիի կմ նու և դեղձի (ձույ, ձեաց), ձիի կմ ձու:

Մալխասյանցի բացատրական բառարանը կարող է համապատասխան քերականական տեղեկություններ տալ նաև հին, գրաբար դրականությունից օգտվողին: Այդ կարևոր է նաև բանասիրական տեսակետից, որովհետև բառահոգվածում ցուցադրված են բառի

կրած բոլոր փոփոխութիւնները: Եթէ մի ժամանակ այս կամ այն բառը հոլովւում էր այնպես, իսկ այժմ հոլովւում է այլ կերպ, բարարանում նշւում է:

Անպայմանորեն տրւում են բայերի անցյալ կատարյալը, առաջին դեմք, եզակի թվով, իսկ հրամայական եղանակի հատուկ ձև ունեցող բայերի համար նշւում է նաև հրամայականը: Գրաբարյան պատճառական կերպի բայերի համար, որոնք անգործածական են ժամանակակից հայերենում, նուրբայես բերւում է հրամայական ձևը՝ գալարեցուցանել, ցուցի, Եցո՛, դանդաղեցուցանել, ցուցի, եցո՛ և այլն:

Բայ-գլխաբառի խոնարհման ձևերից հետո նշւում է բայի սեռը (նր.—անգործական բայ, շք.— շեղոք բայ):

Բառի բացատրութեան միջոցները.— Քերականական ամենաանհրաժեշտ նշումներին հաջորդում է գլխաբառի նշանակութեան հակիրճ բացատրութիւնը: Վերջինս հաճախ տրւում է նկարագրական ձևով:

Օրինակ՝ «Բարեկամ— գ. Մոտիկ ծանոթ, ընկեր, որի հետ մեկը լավ՝ մտերիմ հարաբերութեան մեջ է: Կոչում, որով դիմում են անծանոթին, փոխանակ ասելու ընկեր կամ պարոն»:

«Բարեկարգիչ— նա, որ բարեկարգում է, բարեկարգող»:

Բառարանի հեղինակն աշխատում է բառը բնորոշել, տալ նրա իմաստը ամենասեղմ ձևով, որը բառարանի ամենագրական կողմերից է. օրինակ՝ «Բարեկամութիւն — բարեկամ լինելը»: «Գարնանային — գարնանը հատուկ՝ վերաբերյալ»:

Տալով բառի բացատրութիւնը, միաժամանակ բերւում են եղած հոմանիշները, ինչպես՝ «Բարեխոնութիւն — բարեխոհ լինելը, բարեսիրութիւն, խոհականութիւն, ողջամտութիւն»:

Հաճախ առանց բացատրութեան բառին հաջորդում են մի քանի հոմանիշներ, օրինակ՝ «Աշխույժ— 1. Հուժկու, տաստիկ, բուռն, զորեղ: 2. Զլարթ, առույգ, եռանդով լի, գործունյա: 3. Զվարթութիւն, առուզութիւն, գործունեութեան եռանդ»:

Առանձին դեպքերում բերւում են և բառի հակառակ իմաստները:

Բառիմաստի բացատրութեան մի այլ ձև է բարդ բառերի պարզեցումը, օրինակ՝ բարօր— բարի և օր, զոռոգասպան— գոռովին սպանող, զորգազործ—գորգ գործող, զորգապատ—գորգով պատած և այլն:

Մալխասյանցը հարկ եղած դեպքում, տալով բառի ստուգաբանութիւնը, իր բառարանը հանում է սոսկ բացատրական բառարանի շրջանակներից: Այս տեսակետից բառարանը մոտենում է

պատմական բառարանի պրոֆիլին: Արմատական բառերից հետո բառարանում հաճախ հանդիպում են օտարազգի բառեր. դրանք հին և նոր փոխառություններ են, որոնց աղբյուրը ցույց է տալիս գիտական տառադարձությամբ: Նման դեպքերում Մալխասյանցը դիմում է հետևյալ ձևերին: Նշելով փոխառության աղբյուրը, բացատրում է նրա ունեցած նշանակությունը. այսպես Աշխարհ, փակագծում գրում է ռուս. X sat'ra, տերություն, հզորություն, նոր պարսկ. šahr, երկիր, պետություն»: «Ակադեմիա (հուն. Akadéma պարտեզի անունից, որտեղ ուսուցանում էր Պլատոնը)»: «Բասիլիկ (հուն. basilikós)»: «Բասար (արաբ. basar, տեսողություն, աչք, մտքի կորուվ)»:

Եթե փոխառության աղբյուր հանդիպացող արմատը չի հնչյունափոխվել հայերենում և բառը գործածվում է նույնությամբ, այդպիսի դեպքերում Մալխասյանցը տալիս է օտարազգի ձևը նույնպես, օրինակ՝ դեմոկրատիա (ֆր. démocratie), դեմպինգ (անգլ. dem-ping)»:

Երբ փոխառյալ բառը փոխատու լեզվում բարդ կազմություն ունի, Մալխասյանցը պարզեցնում է այն, օրինակ՝ դեմոկրատիա (հուն. demos, ժողովուրդ, և krátos, հեղինակություն), իսկ եթե բառն անմիջապես հոմարենից չէ վերցված, նշում է այն ուղին, որով բառը հասել է հայերենին, օրինակ՝ նույն դեմոկրատիա բառը. հայերեն բառը պարզեցնելով նա ավելացնում է՝ ֆր. démocratie, ռուս.-ից, այսինքն՝ ինչ ձևով է բառը անցել հոմարենից ֆրանսերենին և վերջինից, ռուսերենի միջնորդությամբ՝ հայերենին: Կամ դեֆեկտ բառը (լատ. defectus, ֆր. défete, ռուս.-ից)»:

Ռուսերենի միջոցով վատարված փոխառությունները նշվում են ռուսերենին փոխատու լեզվի գրությամբ ևս. արսոլյուտ (ֆր. absolu, ռուս.-ից), արստրակցիա (լատ. abstractio, ռուս.-ից), ագենտուրա (գերմ. Agentur, ռուս.-ից): Նման օրինակների թիվը շատ մեծ է: Հայտնի է, որ նոր փոխառությունները գերազանցապես արված են միջնորդաբար՝ ռուսաց լեզվի միջոցով և վերջինիս տառադարձությամբ՝ անկախ փոխատու լեզվի արտասանությունից. ինչպես վերը բերված օրինակներում՝ ֆրանսերեն—absolu, ռուսերեն аб-солют, հայերեն արսոլյուտ. լատիներեն abstractio, ռուսերեն абст-ракция, հայերեն արստրակցիա. գերմաներեն Agentur, ռուսերեն агентура, հայերեն ագենտուրա և այլն: Սակայն այս հարցում միշտ չէ, որ Մալխասյանցը հավատարիմ է մնում հայերենի այլ:

¹ Գետք է լինի՝ ֆր. défaut:

տրադիցիային. երբեմն օտար բառերը բերում է այն գրությամբ, ինչպես նրանք հնչվում են փոխատու լեզվում: Այդ լինում է հատկապես այն բառերի հետ, որոնց սկզբնաձևն ունի հայերենը— հնչյունը, իսկ ուսերեն այն գրվում է Դ-ով. այդպիսի բառերի մեջ Մալխասյանցը երբեմն վերականգնում է բառի բնիկ ձևը, օրինակ՝ անտիպաթիս, անտիպաթիկ, էնթուզիստ:

Բացի փոխառությունների վրա կատարած այս մանրակրկիտ աշխատանքից, Մալխասյանցը նույն ձևով է վարվել նաև բնիկ հայերեն բառերի հետ: Եթե բառի արմատն այսօր չի գիտակցվում, փակագծում տալիս է արմատը, օրինակ՝ առնակավոր (արմ. առնակ), ռոռգաւնել (ռգի, ո՛գ), արար (արմ. առնելի), բաց (արմ. բանալի): Նույն ձևով տրված է և հայերեն հնչյունափոխված բառի ծագումը, օրինակ՝ աբիկ (աղբիկ-ից):

Իսկ այս ձևը միշտ չէ, որ բառարանից օգտվողին կարող է օգնել: Բարդությունը պարզեցնելիս երբեմն ստացվում է ծիծաղելի բովանդակություն, օրինակ՝ այգեկիթ, այգեկուք բարդ բառերի բացատրությունից առաջ Մալխասյանցը տալիս է բարդ բառի բաղադրիչները և ստացվում է մի անգործածական և սխալ արտահայտություն՝ «այգին կթելը», «այգի կթող», «արագաթև (արագ թևեր ունեցող)», «արագաձևոն (արագ ձեռք ունեցող)» և այլն:

Բարդությունների մի մասը լրիվ չլսածանելով բաղադրիչների՝ Մալխասյանցը բառարանից օգտվողին հուշում է մի այլ ձևով, օրինակ՝ դաշնակայարդար (կա-յար), այս նշանակում է, որ բառի առաջին բաղադրիչը վերջանում է «կա» վանկով, իսկ երկրորդ բաղադրիչը սկսվում է «յար» վանկով: Այս մասամբ հետևանք է ուղղագրության անհարմարության: Գրաբար շիմացողը կկարդա՝ դաշնակայարդար և չի գիտակցի յարդար, յարդարել բաղադրիչը: Փակագծի բացատրությունը պետք է տրվեր ժամանակակից ուղղագրությամբ, ինչպես այդ արված է —այ, —ոյ վերջավորվող բառերի համար: Մալխասյանցը փակագծում տալիս է դրանց հնչումը, ինչպես օրինակ՝ լոյն (ույ), քանանայ (ա):

Այս բառագիտական նշումներից զատ բառարանում կան այլ նշումներ, որոնք օգնում են բառի իմաստները ճիշտ ըմբռնելուն:

Բառերի բացատրության մեջ հանդիպում ենք մոտ հիսուն քերականական տերմինների համառոտագրությունների: Բացի ամենաանհրաժեշտ նշումներից (խոսքի մաս, թեքման ձևեր) արված են հետևյալ կարգի նշումներ՝ անեզական, անցողական բայ, արգելական, ածականների բաղդատական, գերադրական աստիճան և այլն: Մասնատգիտական բառերը նույնպես առանձնացվում են ըստ

գիտութեան բաժիններէ, որոնց թիւը հասնում է մի քանի տասնյակի: Տրված բառերի իմաստային երանգներն ու էմոցիոնալ կողմը քացահայտվում են հատուկ նշումներով (առհամարհական, քացասական, ընտանեկան, ծածկաբանութուն, ծաղրական, կրոնական և այլն):

Գործածվում են մի քանի այլ պայմանական նշաններ, որոնք ավելի ցայտուն են և բերվում են գլխաբառից առաջ:

Բառարանում շատ հաճախ հանդիպող **⊙** պայմանական նշանը նշանակում է՝ **հին բառ կամ նշանակութուն**: Հազվադեպ գործածվող բառերն ու նշանակութունները առանձնացվում են * նշանով, գավառական, քարքառային բառերը՝ + նշանով:

Մալխասյանցի բառարանը լինելով ոչ նորմալով՝ ընդգրկում է հայերենի (հին, միջին և նոր շրջանների) ամբողջ բառապաշարը: Բառացանկում կան հազարավոր բառեր, որոնք այսօր դուրս են եկել գործածությունից, սակայն կազմում են գրաբարի բառապաշարի ակտիվ մասը, և հին գրականությունից օգտվելիս կարիք է զգացվում համապատասխան բառարանի: Մյուս կողմից բառարանը կազմված է մեր օրերին, ժամանակակից ընթերցողի համար, ուստի բառերի նշանակությունն արդիական տեսակետից դիտելով, հազարավոր բառերի համար նա պետք է նշեր **հնացած իմաստ**, բառ, քարքառային և այլն, իսկ այդ բոլորը փակագծում տալով բառարանը կծանրաբեռներ, և ծավալը բավական կաճեր:

Այս հանգամանքները հիմնավորում են պայմանական նշանների առաջ գործածությունը: Սակայն պետք է ասել, որ բառարանի հեղինակն այդ հարցում հետևողական չէ: Կարելի է քառարանից բերել քաղմաթիվ օրինակներ, որոնց պայմանական նշանները ճիշտ չեն նշանակված, հաճախ, հարկ եղած դեպքում, բոլորովին չկան:

Ազատագունդ պայմանական նշան չունի, մինչդեռ այսօր բառարանում բացատրված նշանակությամբ չի գործածվում: Ազատածին բերված է **⊙** նշանով, իսկ նույն արմատի այլ ածանցված ձևերը՝ առանց նշանի, օրինակ՝ ազաաածնութուն: Ազատանց հնացած, չգործածվող ձև է, նշանակում է անցաթուղթ, նշան չունի: Ազատ արմատով կազմված մի շարք բառեր նույնպես համապատասխան նշան չունեն, ինչպես՝ ազատատուն, ազատատունիկ և այլն: Ազդել բայի իմաստները տրվում են ժամանակագրական կարգով: Որպես առանձին գլխաբառ տրված է նույն բայը կրավորակերպ՝ ազդվել **⊙** նշանով: Մի՞թե արդի հայերենում չի գործածվում **աշատ ազդվեցի** այդ տեսարանից՝ արտահայտությունը: Այլապես բացատրված է **հոգնած** և ունի + **սթողվորդական** նշանը, իսկ նույն արմատով ալլը-

տել ոչ մի պայմանական նշան չունի: Անդամաբան-ություն S. կազմախոսություն, անդամագնական-ություն S. Կազմախոսություն: Թերթելով բառարանը, կազմախոսություն բառի տակ կարդում ենք այժմ միակ գործածական «անատոմիա» բառը:

Հնդունելով այդ երեք պայմանական նշանների անհրաժեշտությունը, նույնը չենք կարող ասել □ նշանի վերաբերյալ: Մալխասյանցը բառարանի առաջաբանում դրում է, որ խմբագրելիս բառարանի մեջ իր համաձայնությամբ ավելացվել են երկու հազար բառ խմբագիրների կողմից, որոնց առաջարկած գլխաբառերի բառահոգվածն ամբողջությամբ կազմել է ինքը հեղինակը, այստեղ միայն առաջարկությունն է խմբագիրներին: Տվյալ դեպքում առանձին պայմանական նշանի գործածությունը բոլորովին ավելորդ է, նախ՝ ավելորդ տեղ է զբաղեցնում բառարանում, և մյուս կողմից ստացվում է տհաճ տպավորություն: Շատ դեպքերում, արմատական բառը առանց նշանի է, այսինքն՝ Մալխասյանցն է մտցրել բառարանի մեջ, իսկ նույն արմատի ածանցված ձևերը՝ նշան ունեն:

Պայմանական նշանների բազմազանությունը ցույց է տալիս, թե ինչ խորությամբ և որքան մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկել հեղինակը յուրաքանչյուր բառ, ինչպիսի խնամքով է կատարել իր առաջ դրված պատասխանատու խնդիրը:

Բառարանի սկզբունքներից ամենաարժեքավորն այն է, որ բառի տարրեր իմաստները տրվում են ժամանակագրական կարգով: Մինչդեռ Մալխասյանցի բառարանից առաջ եղած թե՛ հայերեն և թե՛ օտարլեզվյալ բառարաններում միևնույն բառի տարրեր իմաստների հաջորդականությունը որոշվում է նրանց գործածությամբ:

Մալխասյանցը, նպատակ ունենալով կազմել հայերենի մի ամբողջական բառարան, իր առաջ դրել է նաև մի ավելի դժվարին խնդիր, այն է՝ տալ բառիմաստի զարգացումը հնից դեպի նորը: Նա տալիս է բառի հնագույն ձևը, նրա ամենահին նշանակությունը և հաջորդաբար մինչև ժամանակակից իմաստը: Այս կարգը նրանից պահանջում է բառաքնական խորաթափանց միտք, հայերենի և նրա ազգակից կամ փոխատու լեզուների իմացություն: Հիմնականում հեղինակը բարեխղճորեն է կատարել այդ: Կան սակավ թվով դեպքեր, երբ այդ հաջորդականությունը լրիվ չէ պահպանված, օրինակ՝ քուղթ բառը: Ինչպես հայտնի է քուղթ բառի նյութի իմաստը ավելի նոր երևույթ է, քան նամակ իմաստը, ուստի հայերենում թուղթ բառի նամակ նշանակությունն ավելի հին է նյութական իմաստից, ինչպես և քեմ բառի թատերական իմաստն ավելի հին է եկեղեցականից:

Դասավորության այս կարգը մեծ օգնություն է հայագիտությանը զբաղվողին, հայերենն ուսումնասիրողին, սակայն լայն մասսաների համար որոշ իմաստով դժվարություն է առաջացնում: Ընթերցողը պետք է որոնի բառահոգվածում բառի այսօրվա, ժամանակակից նշանակությունը:

Բացատրական բառարանի նպատակն է օգտվողին տալ բառի հիմնական իմաստները, որ արտահայտվում է բառահոգվածի բացատրական մասում: Բայց նույն բառը բացի իր հիմնական նշանակությունից տարբեր ոճերի և արտահայտությունների մեջ կարող է ունենալ և այլ իմաստ: Գրականությունից օգտվելիս մարդիկ, հանդիպելով նման ոճաբանական արտահայտությունների, դիմում են բառարանի օգնությանը: Սակայն վերջինիս մեջ բառի բացատրությունը չի արտահայտում այն իմաստը, որ բովանդակում է տվյալ դարձվածքը, ոճը: Այդ կարգի թերություններից զերծ մնալու և ընթերցող մասսաներին ավելի օգտակար լինելու նպատակով բառարաններն ունենում են օրինակներ և ոճեր: Ցանկալի է, որ դրանք ընտրվեն ճաշակով՝ գեղարվեստական գրականությունից և կենդանի լեզվից: Բառարանի մասսայական օգտագործման հանգամանքը թույլ չի տալիս այն ծանրաբեռնել խոսակցական լեզվի, ժարգոնների զանազան գոհիկ արտահայտություններով ու ոճերով, ինչպես անում են որոշ բառարանագիրներ: Փանի որ նույն բառը կարող է ունենալ մի քանի նշանակություն, տարբեր իմաստներ, ուստի բառարանագրից պահանջվում է բացատրված նշանակությունների հաջորդականությամբ բերել օրինակները:

Մալխասյանցի բառարանի օրինակների մեծագույն մասը իր կազմածն են, շատ փոքր տոկոս են կազմում հայ գրողների ստեղծագործություններից քաղված օրինակները և խմբագիրների ավելացրած բառերի և այլ բառերի նրանց կողմից առաջարկած օրինակները: Սա բառարանի թերություններից է: Քիչ են օրինակները հայ նշանավոր գրողների ստեղծագործություններից: Առաջաբանում հեղինակը թվում է այն գրողների անունները, որոնց ստեղծագործություններից նա բերել է օրինակներ (Պոռչյան, Աղայան, Պատկանյան, Թումանյան և այլն), բայց բերված վկայությունների տեղը և հեղինակը չի հիշում, տես՝ աշկաճ, սաբեկ, փառակաճ և այլն:

Ստ. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանում վերնագրային բառի արաբական թվանշաններով համարակալված ու դասավորված նշանակությունների համար բերված են համապատասխան կապակցություններ, օրինակներ: Սակայն հաջողված և ուսանելի, համոզիչ օրինակների կողքին կան նախադասություններ,

որոնք մեղանշում են քերականական, տղղագրական կանոնների դեմ, թույլ են գաղափարապես:

Եթե բառարանագիրները բավարարվին բառի բացատրությամբ և մի քանի օրինակներ տալով, ապա բառարանները անշուշտ պակասավոր կլինեին: Բառերը բացի իրենց հիմնական, կոնկրետ նշանակությունից, դարձվածքների, ոճական արտահայտությունների մեջ վերանալով կոնկրետ իմաստից, ամբողջ կապակցությամբ մի նոր իմաստ են արտահայտում: Շատ հնարավոր է, որ հայերեն ոճերին անծանոթ մարդը տեքստում հանդիպելով աչիդ լույս, աչիբ ծակ արտահայտություններին, բառարանում լույս և աչի բառերը առանձին-առանձին նայելուց հետո էլ չկարողանա հասկանալ աչիդ լույս, աչիբ ծակ և այլ բազմաթիվ ոճեր: Նման դեպքերում ընթերցողին օգնած լինելու նպատակով բառարանագիրները ձգտում են բառարանում հավաքել կենդանի լեզվի ոճերը և արտահայտությունները: Այս տեսակետից Ստ. Մալխասյանցի բառարանն ամենահարուստն է մեր բառարանագրության մեջ:

Մալխասյանցն ամեն բառի տակ բացի օրինակներից քերում է այդ բառով կազմված հնարավոր կապակցությունները, ոճերը, առածները, դարձվածքները և տվյալ բառի ունեցած փոխաբերական իմաստները (նշելով՝ առած է, փոխաբերական իմաստ ունի և այլն): Այսպես, մադ, աչի, փոփ և այլ բառերի տակ բերված ոճերի, բառային կապակցությունների թիվը ինքնին ապացույց է Մալխասյանցի բառարանի այդ մեծ հարստության:

Ստ. Մալխասյանցի բառարանը ժամանակակից ընթերցողի տրամադրության տակ եղած հայերենի միակ բացատրական բառարանն է, որով պետք է առաջնորդվեն հազարավոր աշակերտներ գրականությունից օգտվելիս, ուսուցիչներն իրենց մանկավարժական աշխատանքի ընթացքում պետք է դիմեն նրա օգնությանը, նրան պետք է դիմեն բանասերները լեզվի բառային կազմի, հիմնական բառաֆոնդի և լեզվական այլ իրողությունների ուսումնասիրության ժամանակ: Պատասխանատու ու շնորհակալ դեր ունի կատարելու բացատրական և, ընդհանրապես, ամեն մի բառարան: Այս տեսակետից այն պետք է կատարյալ լինի ու անթերի. բառարանում տեղ գտած սխալն ընդօրինակվում է հասարակության կողմից: Իսկ Ստ. Մալխասյանցի բառարանում նկատելի են որոշ վրիպակներ ու սխալներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Բացատրության մեջ երբեմն ոչ բոլոր նշանակություններն են տրվում (տե՛ս Ամենաճան, Ամպագույն, Այլանման և այլն):

2. Կան անհաջող բացատրություններ:

Օրինակ՝ «Անձնագիր, տե՛ս Անցագիր»:

«Մանկապարտեզ — երեխաների պարտեզ, ստորին աստիճանի դպրոցական հիմնարկ, որտեղ փոքր երեխաները (4—6 տարեկան) պարտիզպանուհու հսկողության տակ խաղում են, թեթև ձեռագործներ են սովորում, երգում են և ուրիշ տարրական կրթություններ ստանում»:

3. Երբեմն առաքումը կա, բայց առաքված բառը չկա, տես՝ Ակնապակի, Աղյոց և այլն:

4. Որոշ բառեր բացատրված են «անստույգ բառ»:

5. Մեծ թվով բույսերի և կենդանիների անունները բացատրվում են «անուրուշ տեսակի» բույս կամ կենդանի:

6. Որոշ բացատրություններ տրված են հնացած ու անկենդան լեզվով, օրինակ՝ «Անատամիա—1 անդամահատություն, 2 տե՛ս կազմախոսություն»:

«Անճառառություն — քթի խուլ լինելը»:

«Դիվարբառ — դեի բերան ունեցող»:

7. Երբեմն բացատրությունները անորոշ են, ինչպես՝

«Ինֆնանայտնագույն—ինքն իրանից բոլորովին հայտնի, քացարձակ հայտնի»:

«Կադր—այս կամ այն սոցիալական՝ պրոֆեսիոնալ խմբի կարգավարժ և ակտիվ աշխատանքի համար լիովին պիտանի կազմ»:

«Կադր—(կինո) առանձին նկար կինո-թաղանթի վրա, Կինոֆիլմի մասը, որ պարունակում է առանձին տեսարան կամ էպիզոդ»:

8. Որոշ բառերի ժամանակակից իմաստը չի բերված (տե՛ս Ատենակալ, Բոցաշունչ, Բոցավառ, Դաճուկ, Երկաթուղային, Օղաշու և այլն):

9. Օրինակների մեջ պատահում են անհաջող մտքեր և արտահայտություններ. ինչպես՝

«Ինքնաթիռը... վազում է» (տե՛ս Այերադրամ):

«Անասնանոց — Մոսկվայի կենդանաբանական պարտեզը»:

«Անվայր — վտյր՝ տեղ չունեցող, տեղի անկարոտ»:

10. Բացատրություններ կան հարցական նշանով, Տե՛ս Բանշա-րամայր, Բոլ, Դայլաբոխ և այլն:

11. Քերականական սխալ ձևերի գործածություն.

«...Պարտավոր է պաշտպանել յուր հայրենիքը թե՛ ներքին, թե՛ արտաքին թշնամիների դեմ» (տե՛ս Ամեն):

«Դատավորը մեզ անընդունակ է» (տես՝ Անընդունակ):

«Նա յուր հոր հոտն էր արածում» (տե՛ս Արածել):

12. Գրութեան մեջ միօրինակութիւն չկա, որպէս գլխաբա-
րերովում են նույն բառի տարբեր գրութիւնները, ինչպէս՝ ազադադ-
աֆադադ, քազուջակ-քակուջակ, ելեկտրական-էլեկտրական: Կան
սխալ գրութիւններ՝ Ափրիկա, ֆիշնա, կիպերիս, կենդրոն, ոֆսիդ,
ծիւնկ, փարտես և այլն:

13. Ավելորդ են բառացանկում, ինչպէս և բացատրութիւններ-
բից հետո բերված թուրքերեն բառերը՝ «Անութ—թէի տակը, անթա-
տակ, ղոլթուլ»։ «Ապտակ—սիլլա», ղարուլ, ղալթ, ղալիթ և այլն:

14. Բացի այդ կարգի սխալներից թյուրիմացութիւն է առա-
ջացնում բառարանագրութեան մեջ արդեն ընդունված բութ (') նշանի
գործածութիւնը ստորակետի փոխարեն:

«Դիմացկուն—դիմացկուն մարդ՝ եզ».

«Դիմացկունութիւն—մարդու՝ կտորի...»:

15. Որոշ անհարմարութիւն է առաջացնում ապաթարցի (')
գործածութիւնը (ալբոմ, անկուտութեան, ալմանախ և այլն):

16. Բառարանում կան նաև տպագրական վրիպակներ (տե՛ս
Զատիկ, Դավա, Բոկեղ և այլն):

17. Պայմանական նշանների սխալ գործածութիւնը իջեցնում
է բառարանի գիտական արժեքն ու վստահութիւնը: Շատ են շփոթ-
ված պայմանական նշանները (տե՛ս Բեռնավորութիւն, Գարշապար.
Գերագանցիկ, Գրտնակ, Խմպերիալիզմ և այլն):

18. Գռեհիկ, միրավորական բառեր կան ոչ միայն բառացան-
կում, այլև հեղինակի կողմից տրվող բացատրութիւնների մեջ (տե՛ս
Աղա, Անառականոց, Զոալ և այլն):

19. Փոխառութիւնների հարցում խստապահանջութիւն չկա.
բառացանկում կան շատ բառեր, որոնք ունեն իրենց հաջողված ձևե-
րը և բերված են առանց տարբերակման պայմանական նշանների:

20. Բառարանում հանդիպում են անհաջող կազմված բառեր.
օրինակ՝ գետնաշարժութիւն, էլեկտրահարդար, թեյեփոց և այլն:

21. Մեծ անհարմարութիւն է առաջացնում բառարանի ուղ-
ղագրութիւնը:

Լեզվի բառային կազմի մեջ կատարված փոփոխութիւնները
իրենց արտացոլումն են գտնում նորմատիվ համառոտ բառարան-
ներում, որպիսին մենք չունենք այժմ: Ձեռքի տակ եղած միակ բա-
ռարանը Ստ. Մալխասյանցի բառարանն է, որը բավարար և համար-
յա լիակատար լինելով բառարանների բառամթերքի ընդգրկմամբ,
միևնույն ժամանակ չի կարող բավարարել սովետահայ ընթերցող-
ների պահանջները:

Սովետահայ գրականության ընթերցողը, պարբերական մամուլին հետևողն ամեն քալափոխում հանդիպում է բազմաթիվ նորակազմ, իմաստափոխված բառերի, որոնց բացատրությունը չի կարելի գտնել Մալխասյանցի ծավալուն բառարանում: Վերջինս պահանջելով իր պատմա-բանասիրական մնայուն արժեքը, միշտ էլ կարող է պետք գալ ընթերցող մասսաներին, բայց մյուս կողմից՝ այն արդեն հնացած է: Մի կողմ թողնելով բառի նշանակության բացատրության, նրա իմաստը պարզաբանող օրինակների լեզվի որոշ շահիվ արխայիկությունը, մեր օրերի համար այն բավականին պակասավոր է:

Մենք գրաբարի համար ունենք նոր Հայկազյան բառարանի նման մի հոյակապ հուշարձան՝ հարուստ վկայություններով, Մալխասյանցի բառարանի նման կապիտալ աշխատանք, որի մեջ հանրագումարի է բերված բառարաններում գրանցված 15 դարերի դրավոր և բանավոր լեզվի բառապաշարը, բայց մենք չունենք ժամակից հայերենի բառարան, որի կենսական պահանջն զգում է մեր հասարակությունը. մի գործ, որը պետք է տա այն, ինչ չկա Ստ. Մալխասյանցի բառարանում, պատերազմական և հուպատերազմյան տարիների մամուլում և գրականության մեջ, ինչպես և խոսակցական լեզվում կազմված և կազմվող նորանոր բառերը: Այդ նշանակում է՝ Ստ. Մալխասյանցի բառարանից հանել գրաբարյան ոչ միայն հազվագեպ գործածական, այլև ընդհանրապես, ժամանակակից հայերենում անգործածական թե՛ գրաբարյան և թե՛ նեղ բարբառային բառերը. մի գործ, որին արդեն ձեռնարկել է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը և պատրաստում է հրատարակության:

Ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» թեև ամենահարուստն է իր բառացանկով, ոճաբանությամբ և բառահոգվածի գիտական մշակությամբ, առումանայնիվ ժամանակակից հայերենի գործնական բառարան չէ, այն, ինչպես դիպուկ արտահայտվել է պրոֆ. Գուրգեն Սևակը «Հայ դասական բառարանագրության պսակն ու հզորափակիչ օղակն է», որը միշտ կմնա որպես հայագիտության լավագույն գործերից մեկը:

Л. Б. ПЕТРОСЯН
«ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА»
Ст. МАЛХАСЯНЦА

Р е з ю м е

Настоящая статья посвящена исследованию четырехтомного «Толкового словаря армянского языка» действительного члена Академии наук Арм. ССР Степаноса Малхасянца. В статье выявлены его преимущества по сравнению с другими армянскими толковыми словарями, указаны недостатки и неувязки, имеющиеся в словаре, с целью, в некоторой степени, облегчить работу по составлению, нового, если не полного, то краткого толкового словаря современного армянского языка. Словник словаря полностью сверен с настольным словарем, с областными словарями академика Р. Ачаряна и С. Амасуни. Кроме того сделана частичная сверка и с другими источниками.

Проверкой установлено, что словарный запас источников, упомянутых Малхасянцем, за незначительным исключением, внесен в его словарь. Однако в словаре не нашли отражения тысячи таких новообразованных активных слов, которые до того не входили в какой-либо словарь.

Издание полного словаря национального языка, который охватил бы весь его словарный запас является первоочередной задачей, имеющей большое культурное и идеологическое значение. В таком словаре нуждался и нуждается армянский читатель. Малхасянец ставит перед собой цель восполнить этот недостаток. Бесспорно, автор задался целью осуществить весьма трудное и благодарное дело. Его словарь является самым большим словарем армянского языка, в его словник входят свыше 120000 слов. Словарь Малхасянца не только суммирует словарный состав армянского языка (в пределах словников словарей), но и подвергает новому научному освещению. В словарной статье он дает полную картину и характеристику каждого слова, полное значение, грамматические особенности, историю изменений смыслов, значений, часто и этимологию. «Толковый словарь армянского языка» Ст. Малхасянца это капитальный труд, который всегда останется как один из самых лучших трудов армянской филологии.